

**ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ

2021 թվականի մարտի 30-ի N7-Լ

Լսելով համալսարանի մասնագետների կողմից մանկական գրականության, խաղերի, մրցույթների հայտերի, հայեցակարգային նախագծերի, ծրագրերի, մոդուլների, չափորոշիչների, ուղեցույցերի փորձաքննության համար վարձավճարներ սահմանելու մասին հարցը՝

Գիտական խորհուրդը որոշում է.

1. Սահմանել վարձավճարներ.

- 1) Մանկական գրականության փորձաքննություն՝ մինչև 1 մամուլ - 10.000, մինչև 2 մամուլ - 20.000, մինչև 3 մամուլ - 30.000 ՀՀ դրամ:
- 2) Յուրաքանչյուր մանկական խաղի փորձաքննության համար - 10.000 ՀՀ դրամ:
- 3) Մրցույթներին ներկայացված յուրաքանչյուր հայտի փորձաքննության համար - 10.000 ՀՀ դրամ:
- 4) Հայեցակարգային նախագծի, ծրագրի, մոդուլի փորձաքննության համար - 15.000 ՀՀ դրամ:
- 5) Չափորոշիչի, ուղեցույցի փորձաքննության համար - 30.000 ՀՀ դրամ:

2. Փորձաքննությունների նախանշված վճարների գումարները հարկելուց և այլ վճարումներ կատարելուց հետո փոխանցել փորձագետների հաշվեհամարներին:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ